

առեալ քանի մը մեծ մարդիկ, վատթար եւ բռնաւոր կառավարութիւն մը կը տիրէր ամենուրեք, արդարութեան գաղափարը սահմանափակ էր նաեւ այդ Մեծ Խոսքովի մտքին մէջ, որ Նուշիրվան կ'անուանուէր եւ որ Սասանեանց փառքն եղած էր իւր քաջութեամբք եւ յաղթութեամբք, երկարամեայ թագաւորութեամբ, եւ ինքզինք արդար կը սիրէր անուանել եւ որ մահուան անկողինն մէջ իր ժառանգին բարի խրատներ կ'ուտար. «Արդարադատ եղիր, սանձահարե անիրաւները, միսիրարե թշուառները, սիրե երիտասարդները, պաշտպանե գիտութիւնը, հետեւէ ծերոց խորհուրդներուն, մի՛ թողուր կառավարութիւնը երիտասարդաց եւ քու ժողովրդոցդ երջանկութիւնը քու նպատակդ լինի: Ընդարձակ թագաւորութիւն մը կը թողում քեզ, եթէ իմ խրատներս լսես՝ կը պահես զայն, եթէ արհամարհես՝ կը կորսնցնես»: Այս խօսքերը զրուցելէն վերջ, եօթանասուն տարի նաեւ չի քշեց, իւր յաջորդներէն եւ ոչ մէկը իր բնական մահուամբ չի մեռաւ, եւ այդ թագաւորութիւնը, որ Միջերկրականէ մինչեւ Զնդկաստան, Զինաց սահմաններէն մինչեւ Արաքիայ ամենքը կը սարսեցնէր քանի մը տարի առաջ, յանկարծ անհետացաւ կատաղի աղանդաւորաց հրոսակներու առջեւ, որոնք ոչ անուն եւ ոչ կրօնք ունէին նոյնպէս քանի մը տարի առաջ:

Այսչափ երկայն չէինք խոսեր այս երկու մեծ ինքնակալութեանց վրայ, եթէ Արշակունեաց թագաւորութեան ժամանակէն սկսեալ Զայաստան սոցալ երկութիւն հպատակ, հարկատու եւ պատերազմի դաշտ եղած չլինէր անընդհատ:

Զայոց ազգը երեքի կը բաժնուէր իրօք՝ որոց երկուքը ամէն բան էին, իսկ երրորդը նշանակութիւն չունէր: Եկեղեցական մարմինը, որուն գլուխը կաթողիկոսն էր, եւ զօր նախարարներն եւ եպիսկոպոսները կ'ընտրէին. ոմներ իւր արտօնութիւնները, վասնզի ինքն էր օրէնքները շինող: Իրեն հետ կ'ուզար Նախարարական մարմինը եւ Ազատաց խումբը, որ երկրին տէրերն էին: Զրամայել, իշխել, պատերազմել էր իրենց գործը: Նախնի սովորութիւնները եւ արտօնութիւնքը կը պահպանուէին դարձեալ իրենց համար, քաջութիւնը ժառանգական էր այդ ընտանեաց մէջ, իրենցկարգը եւ գահոյքը յարգուած էին նաեւ յունաց ինքնակալներէ եւ Սասանեանց թագաւորներէ, յարկ կ'առնէին եկեղեցականաց պէս եւ չէին վճարէր, մարմնաւոր պատիժ գանահարութիւն չի կար իրենց համար, ինչպէս վանքեր, նոյնպէս իրենց ոստանները, ամրոցները, բերդերը, դղեակները ամուր դիրքերու վրայ եւ պարսպապատ շինուած բաւական ապահովեալ էին թշնամեաց եւ ասպատակաց յարձակմունքներէն: Կրօնասէր սովորաբար՝ իրենց պալատներէն աւելի վանքերու եւ եկեղեցիներու շինութեանց եւ կալուածոց կ'ուտային իրենց գանձերը: Պարսկական եւ